

## Հարցաթերթ

### Աշխարհագրություն առարկայի 2018 թ. դպրոցական օլիմպիադայի հանրապետական փուլի (տևողությունը՝ 150 րոպե)

#### 9 – րդ դասարան

- Ընտրել 4 երկրները, որտեղ տարածված կրոնը բուդդայականությունն է.....1 միավոր**  
Ռուսնո՞ր, Շրի Լանկա, Բուրունդի, Կամբոջա, Լաոս, Մալայզիա, Արևելյան Թիմոր, Բուրնի:
- Լուսնի խավարում է տեղի ունենում, երբ.....1 միավոր**
  - Երկիրը Լուսնի և Արեգակի միջև է,
  - Լուսինը Երկրի և Արեգակի միջև է,
  - Արեգակը Երկրի և Լուսնի միջև է,
  - Արեգակը Գալակտիկայի կենտրոնում է:
- Պետությունները դասավորել՝ ուրբանիզացիայի մակարդակի նվազման կարգով.....1 միավոր**  
Մալայզիա, Մեքսիկա, Մոնակո, Մոլդովա
- Ո՞ր պնդումն է ճիշտ.....1 միավոր**
  - Լեռներից իջնելիս մթնոլորտային ճնշումն իջնում է:
  - Լեռները բարձրանալիս մթնոլորտային ճնշումը բարձրանում է:
  - Եթե օդի ջերմաստիճանը բարձրանում է, ապա մթնոլորտային ճնշումը բարձրանում է:
  - Եթե օդի ջերմաստիճանը բարձրանում է, ապա մթնոլորտային ճնշումն իջնում է:
- Կազմել «ժողովուրդ - լեզվախումբ» համապատասխան գույգերը..... 2 միավոր**

բուլղար – ուգրոֆիննական	իռլանդացի – սլավոնական
իսլանդացի – թյուրքական	մոլդավացի – կելտական
փենջաբցի – գերմանական	էստոնացի – իրանական
թալիշ – ռոմանական	իսկաս – հնդկական
- Ո՞ր ուղղությամբ են փչում պասսատները հարավային կիսագնդում.....1 միավոր**
  - հյուսիսից հարավ
  - հյուսիս – արևելքից հարավ – արևմուտք
  - ցամաքից ծով
  - հարավ – արևելքից – հյուսիս – արևմուտք
- Յուրաքանչյուր շարքից դուրս գրել օրինաչափությանը չհամապատասխանող անվանումը.....1 միավոր**
  - Պոպոկատեպետլ, Ավաչինսկայա Սոպկա, Ստրոմբոլի, Մոնբլան
  - Դադստան, Պրիմորիե, Բուրյաթիա, Կարելիա
  - ասիմիլացիա, կոնսոլիդացիա, իմիգրացիա, ակումյացիա
  - Բոֆորտի, Տիեզերագնացների, Սիամի, Սուլու
- Կազմել «մշակաբույս – մշակող մասնագիտացված երկիր» համապատասխան գույգերը..... 2 միավոր**  
Եգիպտացորեն, վուշ, համեմունք, սուրճ, շաքարեղեգ, սիսալ, կակաո, կաուչուկատու հեռաՍյանմա, Կուրա, Քենիա, Մեքսիկա, Բելառուս, Ինդոնեզիա, Կոտ – դը – Իվուար, Կոլումբիա

9. Երկու կետերի իրական հեռավորությունը 3200 կմ է: 1 : 4 000 000 մասշտաբի քարտեզում նրանց հեռավորությունը կլինի.....1 միավոր
1. 0,8 սմ                              2. 8 սմ                              3. 80 սմ                              4. 800 սմ
10. Թվարկե՛լ հրային (մագմային) ծագման չորս ապար.....1 միավոր
11. Հյուսիսային Ամերիկայի տեղաբնակ ժողովուրդներն են.....1 միավոր
1. հնդկացիները, նեգրերը, էսկիմոսները  
2. հնդկացիները, նեգրերը, ալեուիները  
3. ալեուիները, էսկիմոսները, հնդկացիները  
4. մետիսները, ալեուիները, մուլատները
12. Մթնոլորտում ջրային գոլորշիների վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք՝ սխալ.....1,5 միավոր
1. Օդի հարաբերական խոնավությունը չափում են տոկոսներով:  
2. Որքան բարձր է օդի ջերմաստիճանը, այնքան քիչ ջրային գոլորշիներ են պետք այն հագեցնելու համար:  
3. Ամպամած օրերին, սովորաբար, գիշերն ավելի տաք է, քան պարզկա օրերին:  
4. Շերտավոր ամպերն առաջացնում են տեղատարափ անձրև և կարկուտ:  
5. Մթնոլորտի երկրամերձ շերտում ջրային մանրագույն կաթիլների կուտակումը կոչվում է մառախուղ:  
6. Օդի բացարձակ խոնավությունը հարաբերական խոնավության հարաբերությունն է խոնավության այն քանակին, որն անհրաժեշտ է տվյալ ջերմաստիճանում օդը հագեցնելու համար:
13. Շիրակի մարզի վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք՝ սխալ.....1,5 միավոր
1. ՀՀ շաքարի միակ գործարանը Ախուրյանում է:  
2. ՀՀ միակ մարզն է, որ սահմանակից է մեկ մարզի:  
3. Ընդերքը հարուստ է մետաղային հանածոներով և հանքային աղբյուրներով:  
4. Մարզի և Թուրքիայի միջև սահմանն ամբողջությամբ անցնում է Ախուրյան գետով:  
5. Հյուսիս – արևմուտքում և հյուսիս – արևելքում տարածվում են հրաբխային լեռնավահաններ:  
6. Անտառները զբաղեցնում են մարզի տարածքի շուրջ 10 % -ը:
14. Գետի լայնությունը 12 մ է, միջին խորությունը՝ 50 սմ, իսկ ջրի արագությունը՝ 2 մ/վրկ: Որոշե՛լ.....2 միավոր
1. գետի ծախսը,  
2. գետի հոսքը մեկ ժամում:
15. Երկրի բնակչության թիվը 1,2 մլն է: Մեկ տարվա ընթացքում ծնվածների թիվը 18 000 է, իսկ մահացածներինը՝ 12 000 մարդ: Որոշե՛լ..... 2 միավոր
1. բնակչության բացարձակ բնական աճը,  
2. բնակչության բնական աճի գործակիցը (%):